ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում բնակչության կանխարգելիչ հետազոտությունների իրականացման ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակում

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից երկրորդ կիսամյակից, որին պետք է նախորդի ապահովագրության շրջանակներում տրամադրվելիք հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների մշակումը, ներառյալ հիվանդությունների կանխարգելման և վաղ շրջանում հայտնաբերման նպատակով իրականացվող պարտադիր քրինինգային հետազոտություններ:

ԱՀԱ մասին օրենքի նախագծով նախատեսվում է, որ Առողջապահության նախարարությունը պետք է սահմանի վերոնշյալ պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության իրականացման կարգը, պայմանները, ինչպես նաև տեղաշարժման սահմանափակում և հաշմանդամություն ունեցող պացիենտների դեպքում բժշկական կանխարգելիչ զննության առանձնահատկությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագիտական խմբի ղեկավարի աշխատանքի հիմնական նպատակը համակարգել փորձագետների կողմից պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության իրականացման կարգի, պայմանների, ինչպես նաև տեղաշարժման սահմանափակում և հաշմանդամություն ունեցող պացիենտների դեպքում բժշկական

կանխարգելիչ զննության առանձնահատկությունների վերաբերյալ փաստաթղթերի մշակումը, ներառյալ

1. Փորձագիտական խմբի աշխատանքների կազմակերպում
2. Փորձագիտական խմբի աշխատանքների պլանի և ժամանակացույցի կազմում
3. Անհրաժեշտ հանդիպումների և միջոցառումների կազմակերպում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Փորձագիտական խմբի կողմից տրամադրված սքրինինգային հետազոտությունների տվյալների վերլուծության արդյունքների դիտարկում ։
2. Փորձագիտական խմբի կողմից մշակված սքրինինգային ծառայությունների իրականացման մոդելի և սքրինինգների իրականացման յուրաքանչյուր փուլում նախատեսվող գործառույթների դիտարկում:
3. Ծառայությունների իրականացման հնարավորությունների/կարողությունների համալրման և բժշկական ապրանքների և տեխնոլոգիաների ընտրության առաջարկների դիտարկում:
4. Սքրինինգների իրականացման կարգը նկարագրող փաստաթղթերի համակցում, ընդհանուր փաստաթղթի կազմում:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագիտական խմբի ղեկավարը, ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագիտական խմբի ղեկավարը նաև պետք է կազմի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ներ, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Բարձրագույն բժշկական կրթություն , կառավարման ոլորտում կրթության առկայությունը կդիտվի որպես առավելություն:
- Աշխատանքային փորձառություն ՀՀ ԱՆ և/կամ այլ պետական կառույցների հետ, հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, թիմում աշխատելու և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու պատաստակամություն:
- Նմանատիպ ծրագրերի և դասընթացների մասնակցություն
- Սքրինինգային ծառայությունների ուսումնասիրությունների և ցանկերի պատրաստման հմտություններ